*մինչև էսօր ըսկուն կոյս եմ. և ձեզնից ծնելու ժամանակն ինամե մօտ ձին չինե. մենակ խրեշտակն էկաւ ձե անուն տըւաւ:*

8. —*Տղէն ասաց. մենք մեր էյութեն իմացանք. ա՛ն արե ախե քըոյ էյութեն իմացիր մեզի. հալպաթայ*[1] *ախե խեր ունես։ —Մէր ասաց. որտի, ես Սանայ Աստղիկ Թագաւորու աղջիկն եմ:—Ասաց արէ, ախե քըոյ խօր տուն կխտես տուր, որ էրթանք էն տեղը:—Գխտեմ ասաց Սասուն ի:—Որտին ասաց. ա՛ն արե մէյ տեղ խէծնենք էրթանք Սասուն: Սանասար խէծաւ մէրն առեց խաւ. Պաղտասարն իսկեց ձիու յառջև գնացին Սասնու քեաղաք: Որ քաղքին մօտացան, ակնճկէն տարան Սասնու թագաւորուն թէ, քըոյ աղջիկն էկաւ էրկու շահզատայ էլ խետ։*

9. *Աստղիկ Թագաւոր չում էն օր ըսկում լացեցէր ուր ախչկան խամար, որ աչքեր վնասվեր էր. երբ որ լսաւ, շատ ուրախցաւ. էլաւ գնաց ախջկան աէմ: Երբ աէսաւ որ ախչկան խետ մարտ*[2] *չկէր՝ մենակ էրկու լաճերն ին, շատ ասւտմաւ: Սանասարն ասաց ուր ճըոչ պապօին. «Տխե՛նչի ես ասւտմեր:» — Թագաւորն պատասխան տվեց թէ, ախըք Քաչանց Թագաւորու լաճերն էք, շահզատայ էք. պէտք էր որ խետ ձե էրկու խարիր ձիաւոր էլնէր, կայ չկայ որ ախըք խառնվեր իկեր էք:—Ասաց մենք չենք խառնվե. մենք որ կանք, խրեղէնից ծներ ենք: Քըոյ աղջիկ մինչև մկայ էլ կոյս ի: Ինոր խամար մեր մէր իրխանց ինկլցին. մե էլ կասեն թէ ախըք վիճ էք: Էս խօսքի խամար էլանք էկանք ծովու քեանար մեր մօր շատ աղաչեցինք՝ որ մեր խօր սալըխ տէր: Մեր մէրն էլ էս ջիւապ*[3] *իտուր մե: Մենք մկայ իկերենք քըոյ տուռ, թէ մե կոխես մենք քըոյ զաւակներն ենք: Ըսախեց սորա էլ մի վախնայ, Քաչանց երկրից էլ մարտ չի կանայ գայ քըոյ աղջիկը յէտխ անե տանե: Էս խօսքի վէրէն Թագաւոր շատ ուրախացաւ. մէկ օտայ*[4] *իտուր Սանասարին, մէկ Պաղտասարին. մէկ էլ իտուր ուր ախչկան: Պաղտասարի սանխաթ՝* 5 *էն էր որ չում իրիկուն կէրթէր ճան կխաղէր:*

10. *Քեաչանց Թագաւորու ախջիկն՝ Սուռաթ խաթուն որ քառասուն ճօղ ծամ ունէր, մէջ էրազին զինք տեսաւ Սանասար և շատ սիրու տէր էլաւ վեր ինոր: Աղչիկն իմացաւ էս բան, էլաւ ուր սիւռաթն*[6] *գրեց մէջ թղթին իտու էրկու մշակու ձեռք, որ տանեն թալեն Սանասարի էրախն վեր. «Զէնեմ չիմանամ, ասաց, որ թալէք Պաղտասարի էրախն վեր»: Մշակներ որ տարան չգիտցան վուրու էրախն էլնեն, տարան թալեցին ծուռ Պաղտասարի էրախն վեր: Պաղտասար առաւտուն*

1 Ի հարկէ. գուցէ. երևի: 2 Այր. էրիկ: 3 Ջիւղար— պատասխան: 4 Սենեակ. գոմի մէջ կամ կից ծառաների՝ յաճախ եւ ձիերի համար: 5 Արհեստ. պարապմունք: 6 Պատկեր: